



ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

12 ապրիլի 2016 թվականի

թիվ 33

քաղ. Մոսկվա

**«Ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով
Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք
ժամանակավոր ներմուծվող տրանսպորտային միջոցների մասով
Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների
մաքսային մարմինների միջև տեղեկատվության փոխանակման
ապահովում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ
առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով
իրագործելիս տեղեկատվական փոխգործակցությունը կանոնակարգող
տեխնոլոգիական փաստաթղթերի մասին**

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների եւ տեղեկատվական փոխգործակցության մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 3 հավելված) 30-րդ կետին համապատասխան եւ ղեկավարվելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 200 որոշմամբ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Հաստատել կից ներկայացվող՝

«Ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ժամանակավոր ներմուծվող տրանսպորտային միջոցների մասով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջև տեղեկատվության փոխանակման ապահովում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցության կանոնները.

«Ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ժամանակավոր ներմուծվող տրանսպորտային միջոցների մասով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջև տեղեկատվության փոխանակման ապահովում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգը.

«Ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ժամանակավոր ներմուծվող տրանսպորտային միջոցների մասով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջև տեղեկատվության փոխանակման ապահովում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելու համար կիրառվող էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի եւ կառուցվածքների նկարագրությունը.

«Ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ժամանակավոր ներմուծվող տրանսպորտային միջոցների մասով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջև տեղեկատվության փոխանակման ապահովում» ընդհանուր գործընթացին միանալու կարգը:

2. Սահմանել, որ սույն Որոշմամբ հաստատված նկարագրությամբ նախատեսված էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքների տեխնիկական սխեմաների մշակումը եւ արտաքին ու փոխադարձ առեստրի ինտեգրված տեղեկատվական համակարգում տեղեկատվական փոխգործակցության իրագործման ժամանակ օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքների ռեեստրում դրանց տեղադրման ապահովումն իրականացվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի այն դեպարտամենտի կողմից, որի իրավասության մեջ է Եվրասիական տնտեսական միության ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքների համակարգումը:

3. Սահմանել, որ սույն Որոշմամբ հաստատված «Ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ժամանակավոր ներմուծվող տրանսպորտային միջոցների մասով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջեւ տեղեկատվության փոխանակման ապահովում» ընդհանուր գործընթացին միանալու կարգի 6 - 8-րդ կետերին համապատասխան միանալու ընթացակարգի շրջանակներում իրականացվող գործողությունները ենթակա են կատարման սույն Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում:

4. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 100 օրացուցային օր լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի նախագահ՝

Տ. Սարգսյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի ապրիլի 12-ի
թիվ 33 որոշմամբ

ԿԱՆՈՆՆԵՐ

**«Ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով
Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք
ժամանակավոր ներմուծվող տրանսպորտային միջոցների մասով
Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների
մաքսային մարմինների միջև տեղեկատվության փոխանակման
ապահովում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ
առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով
իրագործելիս տեղեկատվական փոխգործակցության**

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոնները մշակվել են Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) իրավունքի մաս կազմող հետեւյալ ակտերին համապատասխան՝

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագիր.

«Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման եւ դրանց բացթողման հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու կարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագիր.

Մաքսային միության Հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի «Ֆիզիկական անձանց կողմից մաքսային սահմանով տեղափոխվող անձնական օգտագործման նպատակով ապրանքների դեպքում մաքսային գործառնությունների իրականացման կարգի եւ նման ապրանքները մաքսային հսկողության տակ չգտնվող ապրանքներ ճանաչելու փաստն արձանագրելու վերաբերյալ հրահանգի մասին» թիվ 311 որոշում.

«Ընդհանուր գործընթացներն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցությունը կանոնակարգող տեխնոլոգիական փաստաթղթերի մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 200 որոշում.

«Արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում տվյալների էլեկտրոնային փոխանակման կանոնները հաստատելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունվարի 27-ի թիվ 5 որոշում.

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների ցանկի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի օգոստոսի 19-ի թիվ 132 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 14-ի թիվ 29 որոշում.

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների վերլուծության, օպտիմալացման, ներդաշնակեցման եւ նկարագրության մեթոդիկայի մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունիսի 9-ի թիվ 63 որոշում.

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պետական իշխանության մարմինների միջեւ եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ անդրսահմանային փոխգործակցության ժամանակ էլեկտրոնային

փաստաթղթերի փոխանակման վերաբերյալ հիմնադրույթի հաստատման մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 125 որոշում:

Սույն կանոնները մշակվել են՝ հաշվի առնելով Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների Միացյալ կոլեգիայի 2015 թվականի հունիսի 4-ի թիվ 15/6 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության (եւ) անդամ պետությունների տարածք (տարածքից) ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծման եւ արտահանման հաշվառումը եւ հսկողությունն ապահովող՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջեւ Տեղեկատվության փոխանակման տեխնոլոգիայի դրույթները:

II. Կիրառության ոլորտը

2. Սույն կանոնները մշակվել են «Ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ժամանակավոր ներմուծվող տրանսպորտային միջոցների մասով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջեւ տեղեկատվության փոխանակման ապահովում» ընդհանուր գործընթացի (այսուհետ՝ ընդհանուր գործընթաց) մասնակիցների միջեւ տեղեկատվական փոխգործակցության կարգն ու պայմանները, այդ թվում՝ այդ ընդհանուր գործընթացի շրջանակներում իրականացվող ընթացակարգերի նկարագրությունը սահմանելու նպատակով:

3. Սույն կանոնները կիրառվում են ընդհանուր գործընթացի մասնակիցների կողմից ընդհանուր գործընթացի շրջանակներում ընթացակարգերի եւ գործառնությունների կատարման կարգը հսկելիս, ինչպես նաեւ ընդհանուր գործընթացի իրագործումն ապահովող տեղեկատվական համակարգերի բաղադրիչները նախագծելիս, մշակելիս եւ լրամշակելիս:

III. Հիմնական հասկացությունները

4. Սույն կանոնների նպատակներով գործածվում են հասկացություններ, որոնք ունեն հետեւյալ իմաստը՝

ավտորիզացում՝ ընդհանուր գործընթացի որոշակի մասնակցին որոշակի գործողությունների կատարման իրավունքների տրամադրում.

ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտի վիճակ՝ ընդհանուր գործընթացի ընթացակարգի կատարման որոշակի փուլում տեղեկատվական օբյեկտը բնութագրող հատկություն, որը փոփոխվում է ընդհանուր գործընթացի գործառնությունները կատարելիս.

Սույն կանոններում օգտագործվող «ընդհանուր գործընթացի ընթացակարգերի խումբ», «ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտ», «կատարող», «ընդհանուր գործընթացի գործառնություն», «ընդհանուր գործընթացի ընթացակարգ» եւ «ընդհանուր գործընթացի մասնակից» հասկացությունները կիրառվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունիսի 9-ի թիվ 63 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների վերլուծության, օպտիմալացման, ներդաշնակեցման եւ նկարագրության մեթոդիկայով սահմանված իմաստներով:

IV. Հիմնական տեղեկություններ՝ ընդհանուր գործընթացի վերաբերյալ

5. Ընդհանուր գործընթացի լրիվ անվանումը՝ «Ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ժամանակավոր ներմուծվող տրանսպորտային միջոցների մասով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջեւ տեղեկատվության փոխանակման ապահովում»:

6. Ընդհանուր գործընթացի ծածկագրային նշագիրը՝ P.CP.04, տարբերակ՝ 1.0.0:

1. Ընդհանուր գործընթացի նպատակը եւ խնդիրները

7. Ընդհանուր գործընթացի նպատակը Միության մաքսային տարածք անձնական օգտագործման նպատակով ժամանակավոր ներմուծվող տրանսպորտային միջոցների (այսուհետ՝ ԱՕՏՄ) հսկողության եւ դիտանցման ապահովումն է՝ Միության անդամ պետությունների լիազորված մարմինների (անդամ պետություններ) միջեւ տեղեկատվական փոխգործակցության մեխանիզմների կատարելագործման հաշվին:

8. Ընդհանուր գործընթացի նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետեւյալ խնդիրները՝

ա) ապահովել ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկությունների էլեկտրոնային եղանակով ավտոմատացված փոխանակումն անդամ պետությունների լիազորված մարմինների միջեւ՝ Միության իրավունքի մաս կազմող՝ միջազգային պայմանագրերին եւ սկտերին համապատասխան արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի կիրառմամբ.

բ) ապահովել արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի տվյալների ընդհանուր մոդելի օգտագործման հիման վրա կառուցված էլեկտրոնային փաստաթղթերի եւ տվյալների միասնականացված կառուցվածքների կիրառումը.

գ) ապահովել ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվության ներկայացումը՝ ըստ անդամ պետությունների լիազորված մարմինների հարցման:

2. Ընդհանուր գործընթացի մասնակիցները

9. Ընդհանուր գործընթացի մասնակիցների ցանկը բերված է 1-ին աղյուսակում:

Ընդհանուր գործընթացի մասնակիցների ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.CP.04.ACT.001	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմին	մաքսային գործի ոլորտում անդամ պետության գործադիր իշխանության մարմնի լիազորված մարմին, որի համակարգում կատարվում են ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ձեռնարկման մաքսային գործառնություններ, եւ որն իրականացնում է ԱՕՏՄ-ի նկատմամբ կիրառվող ՝ Միության իրավունքի մաս կազմող ՝ մաքսային իրավահարաբերությունները կանոնակարգող միջազգային փաստաթղթերի եւ ակտերի կատարման հսկողություն
P.CP.04.ACT.002	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ավարտ իրականացնող լիազորված մարմին	մաքսային գործի ոլորտում անդամ պետության գործադիր իշխանության լիազորված մարմին, որի համակարգում ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հետ կապված մաքսային գործառնություններ կատարելիս իրականացվում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ավարտ
P.CP.04.ACT.003	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգում իրականացնող լիազորված մարմին	մաքսային գործի ոլորտում անդամ պետության գործադիր իշխանության լիազորված մարմին, որի համակարգում կատարվում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգում
P.CP.04.ACT.004	ԱՕՏՄ-ն մաքսային հսկողության տակ չգտնվող ճանաչելու գործընթաց իրականացնող լիազորված մարմին	մաքսային գործի ոլորտում անդամ պետության գործադիր իշխանության լիազորված մարմին, որի համակարգում իրականացվում է ԱՕՏՄ-ն մաքսային հսկողության տակ չգտնվող ճանաչելու գործընթաց ՝ նման ճանաչում ենթադրող հանգամանքների ի հայտ գալու դեպքում
P.CP.04.ACT.005	ԱՕՏՄ-ի մասին տեղեկությունների հարցում կատարող լիազորված մարմին	մաքսային գործի ոլորտում անդամ պետության գործադիր իշխանության լիազորված մարմին, որի համակարգում ԱՕՏՄ-ի մաքսային հսկողություն իրականացնելիս կատարվում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման մասին տեղեկությունների հարցում
P.CP.04.ACT.006	ԱՕՏՄ-ի մասին տեղեկություններ ներկայացնող լիազորված մարմին	մաքսային գործի ոլորտում անդամ պետության գործադիր իշխանության լիազորված մարմին, որն ԱՕՏՄ-ի մասին տեղեկությունների հարցում կատարող լիազորված մարմնի հարցմամբ տեղեկություններ է ներկայացնում ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման մասին

3. Ընդհանուր գործընթացի կառուցվածքը

10. Ընդհանուր գործընթացն ըստ իրենց նշանակության խմբավորված ընթացակարգերի ամբողջությունն է՝

ա) ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու ընթացակարգեր.

բ) ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման ընթացակարգեր.

գ) ԱՕՏՄ-ն մաքսային հսկողության տակ չգտնվող ճանաչելու ընթացակարգեր.

դ) ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման մասին տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգեր:

11. Ընդհանուր գործընթացի ընթացակարգերը կատարելիս իրականացվում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու, ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգելու, ԱՕՏՄ-ն մաքսային հսկողության տակ չգտնվող ճանաչելու մասին տեղեկությունների փոխանակում, ինչպես նաև անդամ պետությունների լիազորված մարմինների հարցումներով այն տեղեկությունների ներկայացում, որոնք անհրաժեշտ են ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնելու համար:


ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ընթացակարգերի խմբի կազմի մեջ մտնում են ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկություններ ներկայացնելու, ինչպես նաև նշված տեղեկություններում փոփոխություններ կատարելու ընթացակարգերը:

ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգելու ընթացակարգերի խմբի կազմի մեջ մտնում են ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկություններ ներկայացնելու, ինչպես նաև նշված տեղեկություններում փոփոխություններ կատարելու ընթացակարգերը:

ԱՕՏՄ-ն մաքսային հսկողության տակ չգտնվող ճանաչելու ընթացակարգերի խմբերի կազմի մեջ մտնում են ԱՕՏՄ-ն մաքսային հսկողության տակ չգտնվող ճանաչելու մասին տեղեկություններ ներկայացնելու, ինչպես նաև այդ տեղեկություններում փոփոխություններ կատարելու ընթացակարգերը:

ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման մասին տեղեկությունների ներկայացման ընթացակարգերի խմբերի կազմի մեջ մտնում են ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման, ինչպես նաև ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ավարտի մասին տեղեկությունների հարցման եւ ներկայացման ընթացակարգերը:

12. Ընդհանուր գործընթացի կառուցվածքի բերված նկարագրությունը ներկայացված է 1-ին նկարում:



Նկ. 1. Ընդհանուր գործընթացի կառուցվածքը

13. Ընդհանուր գործընթացի՝ ըստ իր նշանակության խմբավորված ընթացակարգերի կատարման կարգը, այդ թվում՝ գործառնությունների մանրամասնեցված նկարագրությունը բերված է սույն կանոնների VIII բաժնում:

14. Ընթացակարգերի յուրաքանչյուր խմբի համար բերվում է ընդհանուր գործընթացի ընթացակարգերի միջև առկա կապերը եւ դրանց կատարման կարգն արտացոլող ընդհանուր սխեման: Ընթացակարգերի ընդհանուր սխեման կառուցված է UML (մոդելավորման միասնականացված լեզու՝ Unified Modeling Language) գրաֆիկական նոտացիայի օգտագործմամբ եւ ապահովված է տեքստային նկարագրությամբ:

4. UOSU-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու ընթացակարգերի խումբը

15. UOSU-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելիս UOSU-ի ժամանակավոր ներմուծումն ավարտող լիազորված մարմինը ձեւավորում է UOSU-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմին է ներկայացնում UOSU-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու վերաբերյալ տեղեկություններ: Նշված տեղեկություններում փոփոխություններ կատարելիս UOSU-ի ժամանակավոր ներմուծումն ավարտող լիազորված մարմինը ձեւավորում է UOSU-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմին է ներկայացնում UOSU-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու վերաբերյալ տեղեկություններ:

Նշված տեղեկությունների ներկայացումն իրականացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի ապրիլի 12-ի թիվ 33 որոշմամբ հաստատված «Ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ժամանակավոր ներմուծվող տրանսպորտային միջոցների մասով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջև տեղեկատվության փոխանակման ապահովում» ընդհանուր գործընթացն


արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին (այսուհետ՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգ) համապատասխան: Ներկայացվող տեղեկությունների ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի ապրիլի 12-ի թիվ 33 որոշմամբ հաստատված «Ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ժամանակավոր ներմուծվող տրանսպորտային միջոցների մասով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջեւ տեղեկատվության փոխանակման ապահովում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելու համար օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը (այսուհետ՝ էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրություն):

Ընդ որում, կատարվում են ընդհանուր գործընթացի հետեւյալ ընթացակարգերը՝

«ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների ներկայացում» (P.CP.03.PRC.001).

«ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկություններում փոփոխությունների կատարում» (P.CP.03.PRC.002):

16. ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու ընթացակարգերի խմբի բերված նկարագրությունը ներկայացված է 2-րդ նկարում:



Նկ. 2. ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու ընթացակարգերի խմբի ընդհանուր սխեմա

17. ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու ընթացակարգի խմբի մեջ մտնող ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը բերված է 2-րդ աղյուսակում:

Աղյուսակ 2

ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու ընթացակարգի խմբի մեջ մտնող ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.CP.04.PRC.001	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների ներկայացում	ընթացակարգը նախատեսված է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկություններն ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմին փոխանցելու համար
P.CP.04.PRC.002	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկություններում փոփոխությունների կատարում	ընթացակարգը նախատեսված է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկություններում փոփոխություններն ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմին փոխանցելու համար

5. ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգելու
 ընթացակարգերի խումբ


18. ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգելիս ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգող լիազորված մարմինը ձեւավորում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազոր մարմին է ներկայացնում ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկությունները: Նշված տեղեկություններում փոփոխություններ կատարելիս ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգող լիազորված մարմինը ձեւավորում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմին է ներկայացնում ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգելու մասին փոփոխված տեղեկությունները:

Ընդ որում, կատարվում են ընդհանուր գործընթացի հետեւյալ ընթացակարգերը՝

«ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկությունների ներկայացում» (P.CP.04.PRC.003).

«ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկություններում փոփոխությունների կատարում» (P.CP.04.PRC.004):

19. ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման ընթացակարգերի խմբի բերված նկարագրությունը ներկայացված է 3-րդ նկարում:



Նկ. 3. ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման ընթացակարգերի խմբի
 ընդհանուր սխեմա

20. ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման ընթացակարգերի խմբի մեջ մտնող ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը բերված է 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 3

ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման ընթացակարգերի խմբի մեջ մտնող ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.CP.04.PRC.003	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկությունների ներկայացում	ընթացակարգը նախատեսված է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկություններն ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմին փոխանցելու համար
P.CP.04.PRC.004	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկություններում փոփոխությունների կատարում	ընթացակարգը նախատեսված է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման երկարաձգման մասին տեղեկություններում կատարված փոփոխություններն ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմին փոխանցելու համար

6. ԱՕՏՄ-ն մաքսային հսկողության տակ չգտնվող ճանաչելու ընթացակարգերի խումբ


21. ԱՕՏՄ-ն մաքսային հսկողության տակ չգտնվող ճանաչելիս ԱՕՏՄ-ն մաքսային հսկողության տակ չգտնվող ճանաչող լիազորված մարմինը ձեւավորում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմին է ներկայացնում ԱՕՏՄ-ն մաքսային հսկողության տակ չգտնվող ճանաչելու մասին տեղեկությունները: Նշված տեղեկություններում փոփոխություններ կատարելիս ԱՕՏՄ-ն մաքսային հսկողության տակ չգտնվող

ճանաչող լիազորված մարմինը ձեւավորում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմին է ներկայացնում ԱՕՏՄ-ն մաքսային հսկողության տակ չգտնվող ճանաչելու մասին փոփոխված տեղեկությունները:

Ընդ որում, կատարվում են ընդհանուր գործընթացի հետեւյալ ընթացակարգերը՝ «ԱՕՏՄ-ն մաքսային հսկողության տակ չգտնվող ճանաչելու մասին տեղեկությունների ներկայացում» (P.CP.04.PRC.005).

«ԱՕՏՄ-ն մաքսային հսկողության տակ չգտնվող ճանաչելու մասին տեղեկություններում փոփոխությունների կատարում» (P.CP.04.PRC.006):

22. ԱՕՏՄ-ն մաքսային հսկողության տակ չգտնվող ճանաչելու ընթացակարգերի խմբի բերված նկարագրությունը ներկայացված է 4-րդ նկարում:



Նկ. 4. ԱՕՏՄ-ն մաքսային հսկողության տակ չգտնվող ճանաչելու ընթացակարգերի խմբի ընդհանուր սխեմա

23. ԱՕՏՄ-ն մաքսային հսկողության տակ չգտնվող ճանաչելու ընթացակարգերի խմբի մեջ մտնող ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը բերված է 4-րդ աղյուսակ:

ԱՕՏՄ-ն մաքսային հսկողության տակ չգտնվող ճանաչելու
 ընթացակարգերի խմբի մեջ մտնող ընդհանուր գործընթացի
 ընթացակարգերի ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.CP.04.PRC.005	ԱՕՏՄ-ն մաքսային հսկողության տակ չգտնվող ճանաչելու մասին տեղեկությունների ներկայացում	ընթացակարգը նախատեսված է ԱՕՏՄ-ն մաքսային հսկողության տակ չգտնվող ճանաչելու մասին տեղեկություններն ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմին փոխանցելու համար
P.CP.04.PRC.006	ԱՕՏՄ-ն մաքսային հսկողության տակ չգտնվող ճանաչելու մասին տեղեկություններում փոփոխությունների կատարում	ընթացակարգը նախատեսված է ԱՕՏՄ-ն մաքսային հսկողության տակ չգտնվող ճանաչելու մասին տեղեկություններում կատարված փոփոխություններն ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող մարմին փոխանցելու համար

7. ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման մասին տեղեկություններ
 ներկայացնելու ընթացակարգերի խումբը

24. ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման մասին տեղեկությունների բացակայության դեպքում մեկ անդամ պետության լիազորված մարմինը կարող է համապատասխան հարցումներ ուղարկել այլ անդամ պետությունների լիազորված մարմիններ:

ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման մասին տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգերի կատարման շրջանակներում կատարվում են հետևյալ տեսակի հարցումներ`


ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման մասին տեղեկությունների հարցում.

ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների բացակայության մասին տեղեկատվության հարցում:

ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման մասին տեղեկությունների հարցումը կատարվում է այն դեպքում, երբ անդամ պետության լիազորված մարմնում բացակայում են նշված տեղեկությունները: Հարցումն իրականացնելիս կատարվում է «ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման մասին տեղեկությունների հարցում» (P.CP.04.PRC.007) ընթացակարգը:

ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների բացակայության մասին տեղեկատվության հարցումը կատարվում է այն դեպքում, երբ ԱՕՏՄ-ի մասին տեղեկությունների հարցում կատարող լիազորված մարմնում բացակայում են նշված տեղեկությունները: Հարցումն իրականացնելիս կատարվում է «ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու վերաբերյալ տեղեկությունների բացակայության մասին տեղեկատվության հարցում» (P.CP.04.PRC.008) ընթացակարգը:

25. ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման մասին տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգերի խմբի բերված նկարագրությունը ներկայացված է 5-րդ նկարում:



Նկ. 5. ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման մասին տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգերի խմբի ընդհանուր սխեմա

26. ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման մասին տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգերի խմբում ներառված ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը բերված է 5-րդ աղյուսակում:

ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման մասին տեղեկություններ
ներկայացնելու ընթացակարգերի խմբում ներառված ընդհանուր
գործընթացի ընթացակարգերի ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.CP.04.PRC.007	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման մասին տեղեկությունների հարցում	ընթացակարգը նախատեսված է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման մասին տեղեկությունները, ըստ ԱՕՏՄ-ի մասին տեղեկությունների հարցում կատարող լիազորված մարմնի հարցման, ներկայացնելու համար
P.CP.04.PRC.008	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների բացակայության մասին տեղեկատվության հարցում	ընթացակարգը նախատեսված է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունները, ըստ ԱՕՏՄ-ի մասին տեղեկությունների հարցում կատարող լիազորված մարմնի հարցման, ներկայացնելու համար

V. Ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտները

27. Տեղեկատվական այն օբյեկտների ցանկը, որոնց վերաբերյալ կամ որոնցից տեղեկությունները փոխանցվում են ընդհանուր գործընթացի մասնակիցների միջև փոխգործակցության ընթացքում, բերված է 6-րդ աղյուսակում:

Տեղեկատվական օբյեկտների ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.CP.04.BEN.001	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման մասին տեղեկություններ	տեղեկատվական փոխգործակցության ժամանակ փոխանցվող ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման մասին տեղեկություններ

VI. Ընդհանուր գործընթացի մասնակիցների պատասխանատվությունը

28. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի՝ տեղեկատվական փոխգործակցությանը մասնակցող պաշտոնատար անձինք եւ աշխատակիցները տեղեկությունները ժամանակին ու ամբողջական փոխանցումն ապահովելուն ուղղված պահանջները չկատարելու համար կարգապահական պատասխանատվության են ենթարկվում «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին, Միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերին եւ ակտերին համապատասխան, իսկ անդամ պետությունների լիազորված մարմինների պաշտոնատար անձինք եւ աշխատակիցները՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

VII. Ընդհանուր գործընթացի տեղեկատուներն ու դասակարգիչները

29. Ընդհանուր գործընթացի տեղեկատուների եւ դասակարգիչների ցանկը բերված է 7-րդ աղյուսակում:

Աղյուսակ 7

Ընդհանուր գործընթացի տեղեկատուների եւ դասակարգիչների ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Տեսակը	Նկարագրությունը
1	2	3	4
P.CLS.001	աշխարհի երկրների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է աշխարհի երկրների ծածկագրերի եւ անվանումների ցանկը (կիրառվում է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշմանը համապատասխան)
P.CLS.008	կապի տեսակների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է կապի տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը (ներդաշնակեցված է ՄԱԿ-ի՝ Առևտրի ընթացակարգերի եւ էլեկտրոնային բիզնես գործառնությունների պարզեցմանն ուղղված կենտրոնի (ՄԱԿ ԱԷՊԿ) «Communication Channel Code» դասակարգչի հետ)


P.CLS.015	տրանսպորտի տեսակների եւ ապրանքների տրանսպորտային փոխադրման դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է տրանսպորտային միջոցների տեսակների եւ ապրանքների տրանսպորտային փոխադրման ցանկը եւ դրանց համապատասխանող ծածկագրերը (կիրառվում է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշմանը համապատասխան)
P.CLS.026	Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների տեղեկատու	տեղեկատու	պարունակում է անդամ պետությունների լիազորված մարմինների ցանկը
P.CLS.048	հասցեների տեսակների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է հասցեների տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը
P.CLS.053	Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների մշակման արդյունքի տեսակների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների մշակման արդյունքի տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը

VIII. Ընդհանուր գործընթացի ընթացակարգերը

1. ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու ընթացակարգեր

«ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների ներկայացում» ընթացակարգ (P.CP.04.PRC.001)

30. «ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների ներկայացում» ընթացակարգի (P.CP.04.PRC.001) կատարման սխեման ներկայացված է 6-րդ նկարում:



Նկ. 6. «ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների ներկայացում» ընթացակարգի (P.CP.04.PRC.001) կատարման սխեմա

31. «ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների ներկայացում» ընթացակարգը (P.CP.04.PRC.001) կատարվում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին որոշումն ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտող լիազորված մարմնի կողմից ընդունելիս:

32. Առաջին հերթին կատարվում է «ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների փոխանցում» գործառնությունը (P.CP.04.OPR.001), որի կատարման արդյունքներով ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտող լիազորված մարմնի կողմից ձեւակերպվում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմին են փոխանցվում ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունները:

33. ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկություններն ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմնի կողմից ստանալիս կատարվում է «ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնությունը (P.CP.04.0PR.002), որի կատարման արդյունքներով իրականացվում են նշված տեղեկությունների ընդունումն ու մշակումը: ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների մշակման վերաբերյալ ծանուցումը փոխանցվում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտող լիազորված մարմին:

34. ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտող լիազորված մարմնի կողմից ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների մշակման վերաբերյալ ծանուցում ստանալիս կատարվում է «ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների մշակման վերաբերյալ ծանուցման ստացում» գործառնությունը (P.CP.04.0PR.003):

35. «ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների ներկայացում» ընթացակարգի (P.CP.04.PRC.001) կատարման արդյունքներն են ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմնի կողմից ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների ընդունումն ու մշակումը:

36. «ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների ներկայացում» ընթացակարգի (P.CP.04.PRC.001) շրջանակներում կատարվող՝ ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը բերված է 8-րդ աղյուսակում:

Աղյուսակ 8

«ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների ներկայացում» ընթացակարգի (P.CP.04.PRC.001) շրջանակներում կատարվող ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.CP.04.OPR.001	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների փոխանցում	բերված է սույն կանոնների 9-րդ աղյուսակում
P.CP.04.OPR.002	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում	բերված է սույն կանոնների 10-րդ աղյուսակում
P.CP.04.OPR.003	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների մշակման վերաբերյալ ծանուցման ստացում	բերված է սույն կանոնների 11-րդ աղյուսակում

Աղյուսակ 9

«ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների փոխանցում» գործառնության (P.CP.04.OPR.001) նկարագրություն

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.CP.04.OPR.001
2	Գործառնության անվանումը	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների փոխանցում
3	Կատարողը	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտող լիազորված մարմին
4	Կատարման պայմանները	կատարվում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին որոշում ընդունելու դեպքում
5	Սահմանափակումները	ներկայացվող տեղեկությունների ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը

6	Գործառնության նկարագրությունը	կատարողը կազմում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկություններ պարունակող հաղորդագրություն եւ այն փոխանցում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմին՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունները փոխանցվել են ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմին

Աղյուսակ 10

«ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնության

(P.CP.04.0PR.002) նկարագրություն


Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.CP.04.0PR.002
2	Գործառնության անվանումը	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում
3	Կատարողը	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմին
4	Կատարման պայմանները	կատարվում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունները կատարողի կողմից ստանալիս («ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների փոխանցում» գործառնություն (P.CP.04.0PR.001))
5	Սահմանափակումները	տեղեկությունների ձեռնարկն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեռնարկների ու կառուցվածքների նկարագրությանը, Էլեկտրոնային փաստաթղթի (տեղեկությունների) վավերապայմանները պետք է համապատասխանեն Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգով նախատեսված պահանջներին
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն իրականացնում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում, կազմում եւ ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտող լիազորված մարմին է ուղարկում նշված տեղեկությունների մշակման վերաբերյալ ծանուցումը
7	Արդյունքները	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունները մշակվել են, տեղեկությունների մշակման վերաբերյալ ծանուցումը փոխանցվել է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտող լիազորված մարմին

«ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին
տեղեկությունների մշակման վերաբերյալ ծանուցման ստացում»
գործառնություն (P.CP.04.0PR.003) նկարագրություն

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.CP.04.0PR.003
2	Գործառնության անվանումը	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների մշակման վերաբերյալ ծանուցման ստացում
3	Կատարողը	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտող լիազորված մարմին
4	Կատարման պայմանները	կատարվում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների մշակման վերաբերյալ ծանուցումը կատարողի կողմից ստանալիս («ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնություն (P.CP.04.0PR.002))
5	Սահմանափակումները	տեղեկությունների ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն իրականացնում է ծանուցման ընդունում եւ մշակում՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների մշակման վերաբերյալ ծանուցումը մշակվել է

«ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին
տեղեկություններում փոփոխությունների կատարում» ընթացակարգ
(P.CP.04.PRC.002)

37. «ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկություններում փոփոխությունների կատարում» ընթացակարգի (P.CP.04.PRC.002) կատարման սխեման ներկայացված է 7-րդ նկարում:



Նկ. 7. «ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկություններում փոփոխությունների կատարում» ընթացակարգի (P.CP.04.PRC.002) կատարման սխեմա

38. «ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկությունների փոփոխում» ընթացակարգը (P.CP.04.PRC.002) կատարվում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտող լիազորված մարմնի կողմից ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկություններում փոփոխություններ կատարելիս:

39. Առաջին հերթին կատարվում է «ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին փոփոխված տեղեկությունների փոխանցում» գործառնությունը (P.CP.04.0PR.004), որի կատարման արդյունքներով ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտող լիազորված մարմնի կողմից ձեւակերպվում եւ ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմին են փոխանցվում ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին փոփոխված տեղեկությունները:

40. ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին փոփոխված տեղեկություններն ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմնի կողմից ստանալիս կատարվում է «ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին փոփոխված տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնությունը (P.CP.04.0PR.005), որի կատարման արդյունքներով իրականացվում են նշված տեղեկությունների ընդունումն ու մշակումը: Տեղեկությունների մշակման վերաբերյալ ծանուցումը փոխանցվում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտող լիազորված մարմին:

41. ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտող լիազորված մարմնի կողմից ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին փոփոխված տեղեկությունների մշակման վերաբերյալ ծանուցում ստանալիս կատարվում է «ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին փոփոխված տեղեկությունների մշակման վերաբերյալ ծանուցման ստացում» գործառնությունը (P.CP.04.0PR.006):

42. «ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկություններում փոփոխությունների կատարում» ընթացակարգի (P.CP.04.PRC.002) կատարման արդյունքներն են ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմնի կողմից ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին փոփոխված տեղեկությունների ընդունումն ու մշակումը:

43. «ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկություններում փոփոխությունների կատարում» ընթացակարգի (P.CP.04.PRC.002) շրջանակներում կատարվող՝ ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը բերված է 12-րդ աղյուսակում:

«ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկություններում փոփոխությունների կատարում» ընթացակարգի (P.CP.04.PRC.002) շրջանակներում կատարվող ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.CP.04.OPR.004	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին փոփոխված տեղեկությունների փոխանցում	բերված է սույն կանոնների 13-րդ աղյուսակում
P.CP.04.OPR.005	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին փոփոխված տեղեկությունների ընդունում եւ մշակում	բերված է սույն կանոնների 14-րդ աղյուսակում
P.CP.04.OPR.006	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին փոփոխված տեղեկությունների մշակման վերաբերյալ ծանուցման ստացում	բերված է սույն կանոնների 15-րդ աղյուսակում

«ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին փոփոխված տեղեկությունների փոխանցում» գործառնության (P.CP.04.OPR.004) նկարագրություն

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.CP.04.OPR.004
2	Գործառնության անվանումը	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին փոփոխված տեղեկությունների փոխանցում
3	Կատարողը	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտող լիազորված մարմին
4	Կատարման պայմանները	կատարվում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին տեղեկություններում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում

5	Սահմանափակումները	ներկայացվող տեղեկությունների ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողը կազմում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին փոփոխված տեղեկություններ պարունակող հաղորդագրություն եւ այն փոխանցում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմին՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին փոփոխված տեղեկությունները փոխանցվել են ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմին

Աղյուսակ 14

«ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին փոփոխված տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնության (P.CP.04.0PR.005) նկարագրություն

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.CP.04.0PR.005
2	Գործառնության անվանումը	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին փոփոխված տեղեկությունների ընդունում եւ մշակում
3	Կատարողը	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմին
4	Կատարման պայմանները	կատարվում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին փոփոխված տեղեկությունները կատարողի կողմից ստանալիս («ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին փոփոխված տեղեկությունների փոխանցում» գործառնություն (P.CP.04.0PR.004))
5	Սահմանափակումները	տեղեկությունների ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը, Էլեկտրոնային փաստաթղթի (տեղեկությունների) վավերապայմանները պետք է համապատասխանեն Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգով նախատեսված պահանջներին

6	Գործառնության նկարագրությունը	կատարողն իրականացնում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին փոփոխված տեղեկությունների ընդունումը եւ մշակումը, կազմում եւ ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտող լիազորված մարմին է ուղարկում նշված տեղեկությունների մշակման վերաբերյալ ծանուցումը
7	Արդյունքները	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին փոփոխված տեղեկությունները մշակվել են, տեղեկությունների մշակման վերաբերյալ ծանուցումը փոխանցվել է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտող լիազորված մարմին

Աղյուսակ 15


«ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին փոփոխված տեղեկությունների մշակման վերաբերյալ ծանուցման ստացում» գործառնության (P.CP.04.OPR.006) նկարագրություն

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.CP.04.OPR.006
2	Գործառնության անվանումը	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին փոփոխված տեղեկությունների մշակման վերաբերյալ ծանուցման ստացում
3	Կատարողը	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտող լիազորված մարմին
4	Կատարման պայմանները	կատարվում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին փոփոխված տեղեկությունների մշակման վերաբերյալ ծանուցումը կատարողի կողմից ստանալիս («ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին փոփոխված տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնություն (P.CP.04.OPR.005))
5	Մահմանափակումները	տեղեկությունների ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն իրականացնում է ծանուցման ընդունում՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծումն ավարտելու մասին փոփոխված տեղեկությունների մշակման վերաբերյալ ծանուցումը մշակվել է

2. ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի
երկարաձգման ընթացակարգեր

«ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկությունների ներկայացում» ընթացակարգ (P.CP.04.PRC.003)

44. «ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկությունների ներկայացում» ընթացակարգի (P.CP.04.PRC.003) կատարման սխեման ներկայացված է 8-րդ նկարում:



Նկ. 8. «ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկությունների ներկայացում» ընթացակարգի (P.CP.04.PRC.003) կատարման սխեմա

45. «ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկությունների ներկայացում» ընթացակարգը (P.CP.04.PRC.003) կատարվում է

ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգում իրականացնող լիազորված մարմնի կողմից ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին որոշում ընդունելիս:

46. Առաջին հերթին կատարվում է «ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկությունների փոխանցում» գործառնությունը (P.CP.04.0PR.007), որի կատարման արդյունքներով ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգում իրականացնող լիազորված մարմնի կողմից ձեւակերպվում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմին են փոխանցվում ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկությունները:

47. ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկություններն ԱՕՏՄ ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմնի կողմից ստանալիս կատարվում է «ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնությունը (P.CP.04.0PR.008), որի կատարման արդյունքներով իրականացվում են նշված տեղեկությունների ընդունումն ու մշակումը: ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկությունների մշակման վերաբերյալ ծանուցումը փոխանցվում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգում իրականացնող լիազորված մարմին:

48. ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգում իրականացնող լիազորված մարմնի կողմից ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկությունների մշակման վերաբերյալ ծանուցում ստանալիս կատարվում է «ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկությունների մշակման վերաբերյալ ծանուցման ստացում» գործառնությունը (P.CP.04.0PR.009):

49. «ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկությունների ներկայացում» ընթացակարգի (P.CP.04.PRC.003) կատարման արդյունքներն են ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմնի կողմից ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկությունների ընդունումն ու մշակումը:

50. «ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկությունների ներկայացում» ընթացակարգի (P.CP.04.PRC.003) շրջանակներում կատարվող՝ ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը բերված է 16-րդ աղյուսակում:

Աղյուսակ 16

«ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկությունների ներկայացում» ընթացակարգի (P.CP.04.PRC.003) շրջանակներում կատարվող՝ ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.CP.04.0PR.007	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկությունների փոխանցում	բերված է սույն կանոնների 17-րդ աղյուսակում
P.CP.04.0PR.008	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում	բերված է սույն կանոնների 18-րդ աղյուսակում
P.CP.04.0PR.009	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկությունների մշակման վերաբերյալ ծանուցման ստացում	բերված է սույն կանոնների 19-րդ աղյուսակում

«ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին
տեղեկությունների փոխանցում» գործառնության
(P.CP.04.0PR.007) նկարագրություն

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.CP.04.0PR.007
2	Գործառնության անվանումը	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկությունների փոխանցում
3	Կատարողը	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգում իրականացնող լիազորված մարմին
4	Կատարման պայմանները	կատարվում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգելու մասին որոշում ընդունելու դեպքում
5	Սահմանափակումները	տեղեկությունների ձեռագրում ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեռագրների ու կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողը կազմում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմին է փոխանցում ԱՕՏՄ ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկություններ՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկությունները փոխանցվել են ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմին

«ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին
տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնության
(P.CP.04.0PR.008) նկարագրություն

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.CP.04.0PR.008

2	Գործառնության անվանումը	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում
3	Կատարողը	ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման հսկողություն իրականացնող լիազորված մարմին
4	Կատարման պայմանները	կատարվում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկությունները կատարողի կողմից ստանալիս («ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկությունների փոխանցում» գործառնություն (P.CP.04.0PR.007))
5	Սահմանափակումները	ստացված ծանուցման ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը, Էլեկտրոնային փաստաթղթի (տեղեկությունների) վավերապայմանները պետք է համապատասխանեն Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգով նախատեսված պահանջներին
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն իրականացնում է ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգման մասին տեղեկությունների ընդունումը եւ մշակումը, կազմում եւ ԱՕՏՄ-ի ժամանակավոր ներմուծման ժամկետի երկարաձգում իրականացնող լիազորված մարմին է ուղարկում տեղեկությունների մշակման վերաբերյալ ծանուցումը
